

դաց զարգացմանց մէջ չկային շարք մը ներգործութեանց, որ դէպ ՚ի մի և նոյն կէտն ուղղէին յառաջադիմութիւնը: Խւրաբանչիւր ազգ միշտ ունեցեր է մասնաւոր հանգամանք կամ առանձինն յարմարութիւնք, ըստ կլիմային, ըստ աշխարհագրական կամ տեղագրական դրիցն: Երկրին բերքն, հողուն բնութիւնը, տուփն ազգաց բարոյական զարգացմունք, բնական ունակութիւնք, ճաշակք, ճարտարութիւնք, մէկմէկէ շատ ասրբեր նիւթերու վրայ. և որոնք մեծ ազգեցութիւն ունեցան անոնց բաղդին վրայ: Օրէնսդրաց բնաւորութիւնք, կիրքն, ելց և զգալու կերպն, որոնք կանոնաւորեցին ընկերութեանց յարաբերութիւնները, որոնց իրենք ալ մասն կը կազմէին, ձեռընտու եղան նաև տպաւորելու այս ընկերութեանց վրայ այնպիսի բնաւորութիւններ, որ շատ անգամ անջնջելի մնացին և ընդդիմացան ամենայն փոփոխութեանց և ամենայն յեղափոխութեանց բազմաթիւ դարուց: Երբ ամենայն մտադրութեամբ կը քննենք ժողովուրդներն, ուրինք առաջին տեսութեամբ այնպէս կը ցուցընեն թէ մի և նոյն դասէ ըլլան, ինչպէս որ մի և նոյն հասարակաց ծագումն ունին, կը տեսնենք ևս քան զես որ շատ տարրերութիւններ ունին իրենց բարուցն ու սովորութեանցը մէջ, պատճառաւ պարագայից, թէպէտ և երբեմն թեթևագունից, որ անոնց մը տացն ուրիշ հակումն տուեր են:

Թէպէտև դժուարին ըլլայ քննել ու գտնել պատճառներն՝ որ առաջնորդեցին կամ մղումն տուին ժողովրդոց մը տառարական այս կամ այն ճամբուն մէջ մտնելու, և ծրագրեցին անոնց քաղաքականութեան նկարագիրն, սակայն կարելի է գուշակել անոնց համրելու կերպէն, անոնց թուարկութեան դրութենէն և անոնց դործածած թուագրութեանէն (Algorithm) թէինչ կերպ արտեսոից կամ գիտութեանց մշակութիւնը մեծ ազգեցութիւն ըրեր է անոնց բաղդին վրայ:

Թուագրութիւն կ'ըստի այլ և այլ

կերպերն որ կը դործածուին հաշիւները նշանակելու, թէ թուանշանօք, թէ նշանագրովք կամ խորհրդածութեամբ սահմանաց, զոր ենթակայ են ընդունելու այլ և այլ կարգի մեծութիւնք երբ միանգամայն կը փոփոխին, և որոնց յարաբերութիւնքը կը հաստատուին:

Թուարանութիւնը, գրահաշիւր, տարբերական և ամբողջական հաշիւր, զանազանութեանց հաշիւր իրենց յատուկ թուագրութիւնը կամ նշանագրութիւնն ունին, և դիւրին է ըմբռունելը թէ կընայ ըլլալ և կարելի է գրանել ուրիշ կերպեր ալ քանակութիւնները բաղդատելու և իրարու յարաբերութիւնքը հաստատելու, որով ծանուցեալ թուագրութեանց համրանքն երթալով կ'ածի:

Օրագրիս հետագայ թերթերուն մէջ կը ջանանք պարզ և մեկին ոճով բացատրել թուագրութեանց այլ և այլ կերպերն, ինչպէս նաև գիտութեանց և արտեստից վրայ ըստ կարի դիւրիմաց հատուածներով ամփոփել շատ մը կարեռը ինդիրներ, և այսպէս կազմել առանձին մաս մը օրագրիս մէջ չանդէս գիտութեանց և արուեստից անուամբ:

ՈԼԻՎԻԷ

Գ

Զարհուրեցա՞ր, բարեկամ. սակայն գեռ ամէն բան չպատմեցի: Արթնցաւ կասդոն, բայց քուն մնաց խելքը. երբոր ինքն իրեն եկաւ, խենթեցած էր. անանկ կատաղի խենթ, որ փոխանակ հանգարտելու իր կնոջ տեսութեամբն աւելի կը մոլեզնէր: Խենթութիւն ահաւոր, որովհետև չէր մոռցուցած հանդիպած դէպքը. կասդոնի բանավարութիւնը նաւարեկեր՝ այլ յիշողութիւնն ապրեր էր: Միտքը դրած էր որ տղուն մահուան վրայ՝ մեռնելու դատապարտեր են զինքը, և սպանութեան տանե-

լու միջոցը փախեր՝ բայց կնիկը կը փընտուէ զինքը սրպէս զի դահճին ձեռքը մատնէ : Հանդարտ էր ըստ բաւականին ինծի հետ մինակ եղած ատենը . կոմսուհին աչքին հանդիպածին պէս՝ սոսկալի գոչմամբ կ'աղաղակէր : Փուճ տեղն անիկայ արտաստագին և աղաջաւոր կերպով քովը կը մօտենար . փուճ տեղն անոյշ խօսքերով կը ջանար վախը փարատել . սարսափը կ'առնուր զիասդոն , կահկարասեաց ետևը կը պահուրտէր , կամ ձեռքերնէս թօթվերով ինքզինքը՝ կ'երթար գունաթափ և դողդրդալով պալատին ձեղունին մէջ կը կծկէր . և հազիւ հազ կրնայի հանել հոնտեղէն և խուցը բերել : Առջի բերան ժամանակաւոր յիմարութիւն մը կարծեցի . բայց ըղեղին տենդն օր ըստ օրէ փոխանակ նուազելու կը սաստկանար : Բաց ինձմէ մարդ չէր թողուր քովը . իմ կերպարանքէս միայն չէր կասկածէր : Վալ կրան տիկինը բոնադատեցաւ անկէ ետքն առջեւը չերևնալու . խեղճը մէկ օրուան մէջ ամէն բան կորսնցուցեր էր . մի և նոյն հարուածով էրիկն ուղաւակը կորուսեր էր : Վերցուր տառապելոց Աստուածը . զրկէ թշուառ կինն Աստուծմէ որ կը քաջալերէ և կը միսիթարէ , այն ամենալաւ Աստուծմէն որ արտասուքնիս կը համրէ . կը հարցընեմ քեղի՝ ինչ կը մնար իրեն :

Տեսայ ան ատեն քրիստոնէական հաւասոց և համակերպութեան կարողութիւնը : Կենաց մեծ փորձանքներուն մէջ՝ փիլիսոփայութիւնն օգուտ մը չունի . կրօնքն և եթ համբերել կը սորվեցընէ : Եւ Աստուծմէ չեկած ոյժն ու քաջալերութիւնը ո՞րն է . — իւրաքանչիւր մարդոյ կազմուածքին հետեւանքը . կաղնին դէմ կը կենայ , իսկ թփիկը կը խորտակի : Վալկրան տիկինն հպատակեցաւ երկնից և իր երջանկութեան աւելրակաց վրայ ծնրադրած ազօթեց : Իր ազիտից սաստկագոյն կակիծին միջոց ալ բերնէն նախատինք մը չթուաւ Նախախնամութեան դէմ . սըրբուհւոյ՝ մարտիրոսի պէս երեցուց միշտ զինքը : Գիտէր որ Օլիվիէ իյնալով չէր

մեռած , ինչպէս որ առաջ պատմեր էի իրեն . ամէն բան տեղն 'ի տեղ ըմբըռներ ու գուշակեր էր : Այս սոսկալի գաղտնիքը սրտին մէջ պահեց , և ոչ երբէք խօսք բացինք անոր վրայօք . էրկանը վրայ ցրցուցած զարմանալի կարեկցութենէն , ամուսնական սիրոյն աճմանէն , և հրեշտակային համբերութեամբ խեղճ յիմարելոյն թշուառութիւնը խոնարհար ընդունելէն և եթ հասկըցայ՝ որ ամէն բան գիտէր : Երբ սաստիկ յողնութենէն քունը կը կոխէր կասդոնի վրայ , կամացուկ մը կնիկը սենեակը կը մտնէր , զիսուն քովը ծունկ կը դնէր , և անոր քնոյն մէջ՝ ցած ձայնով հետը կը խօսէր : Այսպէս կը վազցընէր 'ի գիշերային մժութեան՝ սիրոյ և ցաւոց աղբիւրներն որոնցմով զեղուն էր : Կը յուսար որ կասդոն խեղճը գըրլուխն արթըննար ու գրկախառնէր հետը , և 'ի գութ շարժելով՝ լար իրեն հետ : Անոտի յոյս . արթնցածին պէս խենթութիւնը վրայ կը վազէր , և կոմսուհին բանադատուելով հեռանալու ողբանուէր ստուերի մը պէս կ'աներեւութանար :

Սակայն բանը ասանկ թողով չէր ըլլար : Ֆուրէ բժիշկը կանչել տուի Նանդ քաղաքէն . կը ճանչնաս զինքը . գիտես որ ազնիւ ծերունին սրտի և մըտաց կատարելութեանցն հետ կը միացընէ արուեստին փորձը : Ոչ միայն մարմնոյ հիւանդութիւնները բժշկելու ճարտար է , այլ նաև սրտի բժիշկ է . կը ճանչնամ մարդիկ որ իրմէն առողջացած են : Վալկրան տիկինն ամենամեծ վստահութիւն ունէր վրան , որուն արժանաւոր էր բժիշկը : Ֆուրէ քանի մը օր քննելէն ու խորհրդածելէն ետքը , առանձնացաւ հետս ու ըստս .

— Զեմ յուսար որ խեղճ երիտասարդին ըղեղը նորէն տեղը դայ . հրաշքով կրնայ բժշկուիլ , բայց բժիշկները չեն հրաշագործեր : Այն խենթութիւնն որ բանաւոր պատճառէ առաջ կտղայ , գրեթէ միշտ անդարմանելի է : Նման է ճշմարտութենէ մը ելած մոլորութեան , որուն հետեւանքը թէպէտ

անտեղի, բայց առաջարկութիւնն ու զիդ ըլլալով՝ ոյժ կու տայ անոր և իր բեւ անառիկ պատճիշով կը զօրացընէ։ Ի վերայ այսր ամենայնի՛ ձեռքերնէս եւ կած փորձը պէտք է ընենք, թէ և առողջութեան ճար չըլլայ։ Այս տեղս վալկրան կոմսին համար չէ. իր կնոջ ներկայութիւնն և այն վայրաց տեսութիւնն, որք իր երջանկութեանն երկար ատեն հանդիսատես եղած են, կը դրգուեն ու կը զայրացընեն զինքը։ Հարկ է ելլէ երթայ, հեռանայ ասկից։ Երբ հայածուելու վախը կտրի, մոլեգնութիւնը կը հանդարսոի։ Ես խօսք կու տամ որ Գաղղիայէն դուրս ելածին պէս՝ կատաղութիւնը կ'իջնայ կը խաղաղի. բաւական է որ կամացը դէմ բան մը չըլլուի։ Մնացածը ժամանակին թողունք. մենք քժիշկըս երբոր ուրիշ ճար չունինք՝ այս ճարը կ'ապըսպընք։

Բժիշկին կարծիքն այս էր. իմն ալ անոր համաձայն։ Վալկրան տիկնոջ առջևն որ դրի բանը, դէմ չկեցաւ.

— Բայց որովհետեւ էրիկս կը վախչի ինծմէ, ըաւ արտասուօք, ես հետը չեմ կրնար երթալ. . . . ուրեմն ով պիտի տանի զինքը։

— Ես իսկ, տիկին, պատասխանեցի։ Երկրորդ օրը անաստղ և անլուսին դիշերով՝ ճամբորդի կառք մը պարտիզին դրանն առջև կեցած էր։ Դիւրաւ համոզելով զկապոնն հետս դալու, առի վար տարի զինքը։ Միտքս դրեր էի որ խոհեմութեամբ ամէն հընալք բանեցուցած էի իր փախուստը ծածկելու համար. դիշերը՝ մթին, ծառայք քուն էին, կնիկը բան չէր կրնար դիտնալ։ Գայլանման քայլերով դուրս ելանք. և վանդակեայ դուռն որ հասանք, կատոն կառքին մէջ ցատքեց։ Ես ալ հեծնալու վրայ էի, երբոր մթութեան մէջ տեսայ վալկրան տիկինը։ Զեռքս իրեն քաշեց և բռնի շրմանցը մերձեցուց։ Վայրկեան մը անցաւ՝ ձիերը սրարշաւ կը վաղէին։

Դ

Բարեկամ, ինչպիսի ճամբորդութիւն. մտիկ դիր որ դաղափար մը առնես։ Դէպ ՚ի խտալիա դարձուցած էինք ճամբանիս. ըստ դուշակութեան բժշկին՝ սահմանագլուխն անցնենէս ետքը՝ կասդոնի խենթութիւնն աւելի կակցաւ ու ընդելացաւ։ Ճշմարիտն ըսելով, ըղեղին մէկ մասը միայն մնասուած էր, մնացած մասերն առողջ և անարատ էին։ Ամէն բանի վրայ իր սովորական ուղիղ տեսութեամբը կը խօսէր. բայց բաւական էր որ կնոջն անունը տայի, մէկէն խեթքը գլխէն կ'երթար։ Քաղքէ քաղաք կ'անցնէինք. իմ ջանքս միտքը զբաղեցընելն էր, ինքն ալ ամէն տեղ մէկտեղ կը տանէր իր հոգւոյն աւերակը. վասն զի թէպէտ երբեմն յիմարութիւնը կը թմրէր, յիշողութիւնն – անողոքելի թշնամի – դուկ դաղար չէր տար։ Այսպէս ո՞ր կողմը դառնար եղկելին, տանջանաց փոփոխութիւն միայն կ'ունենար։ Իսկ ես ճշդիւ կը պահէի երթալու միջոց կոմսուհոյն ու բժշկին տուած խոստմունքս. կը գրէի ամէն բան կ'իմացընէի իրենց. իրենցմէ ալ միշտ պատասխան կ'առնէի թղթերուս։ Ճամբայ ելլենէս երկու ամիս վերջը նամակ մը առի ձենու վա վալկրան կոմսուհիէն։ Ի՞նչ կ'ըսես. աս նամակն յուսով կը լմբնար. այն ազդեցութիւնն ըրաւ վրաս՝ ինչ որ կ'ընէ ծովու մէջ վտանգի եղողին վրայ, երբորյանկարծ առադաստի մը ճերմը. կութիւնն աչքը կը զարնէ գորիզոնին վրայ։ Բժիշկն ալ քանի մը տող քովին աւելցուցեր էր նամակին տակը. կը հաստատէր ուրախալի լուրն և կը յանձնէր որ չըլլայ թէ կասդոնի իմացը. նեմ։ Գանի մը ամիս վրան անցաւ, մի և նոյն օրն երկու նամակ ձեռքս հասան ֆիբէնցէ, մէկը կոմսուհոյն՝ միւսը բժշկին։ Առաջինն աստուածապաշտ սրտէ ելած երախտագիտութեան երգ մըն էր. ծնկան վրայ կարդացի զան և արտասուօք թրջեցի։ Երկրորդն իմ ը-

նելիքներս կը պատուիրէր . և ծերունին՝ բռնելու նպատակնիս խմացընելէն վերջը՝ կ'աւելցընէր . « Յուսահատելի չէ բանը , ճար կրնայ ըլլուիլ . միայն մի մոռնար եղածը ծածուկ պահելու վալ կրան կոմսէն , որովհետեւ այս մեր փորձին յաջողութիւնը քու խոհեմութենէդ կը կախուի » :

Անցան ամիսներ . անցան տարիներ ու խեղճ բարեկամիս վիճակին վըրայ փոփոխութիւն մը չտեմնուեցաւ : Գրեթէ բոլոր Եւրոպա քալեցինք , անկէ Արևելք անցանք . սակայն ամէն տեղ խենթութիւնը հետն էր : ինչուան Ոլիմպոս լերան ստորոտն ալ , մինչև Մեռեալ ծովուն Եզերաց վրայ ալ՝ կրնոջմէն մասնաւոր զրկուած մարդիկ կը տեսնար . հազիւ թէ վրաննիս տեղ մը կը դնէինք , հարկ կ'ըլլար մէկէն վերցընել :

— Ի՞նչպէս կ'ըլլայ , կը հարցընէի երբեմն իրեն , որ կնոջդ պէս անոյշ , սիրալիր ու անձնանուէր ամուսին մը մահդ ուզենայ , ու այս աստիճանի ետեկդ իյնայ գքեղ հալածելու :

— Ի՞նչպէս կ'ըլլայ , կը պատասխանէր ձայնը բարձրացընելով , խենթ ես ուրեմն գու Մարիոյ : Մայր մը կը ներէ իր որդին սպաննողին . ես չեմ որ սպաննեցի իրեն զաւակը ...

Կ'ըսէր և կը գոռար կը գոչէր անանկ բարկութեամբ՝ որուն անուն չեմ գիտեր , անլուր թշնամանօք Աստուծոյ վրայ կը բրդէր , և անհաւատալի հայհոյանքներ կ'արձրկէր Նախախնամութեան՝ ան միջոցին որ անիկայ զինքը կը հոգար :

Ստել չեմ ուզեր կամլաւագոյն քան ինչ որ եմն երենալ . չեմ ըսեր , բարեկամ , որ ձեռք զարկած գործս չծանրացաւ երբէք վրաս . մանաւանդ թէ քանի մը անզամ զիս ճնշելու վրայ էր : Բորոտներուն տարուած խնամքը քաղցր և դիւրին կ'երեւայ մարդուս երբոր խենթի մը հետ կեանք անցուցած ըլլայ : Ատեն կ'ըլլար որ տագնապալից ես ինծի կը հարցընէի չըլլայ թէ ես ալ խենթեցած ըլլամ , ինչպէս կ'ըսէր կաս-

դոն : ինչուան հիմա իսկ՝ շատ կը վախեմ որ խենթութիւնը երկայն կենակցութեամբ կրնայ ուրիշի փոխադրիլ :

Հայրենիքէն եկած նամակներն էին ինծի ոյժ և կտրընութիւն տուողը . բժշկին թղթերը վատահութեամբ գրուած էին . իսկ կոմսուհւոյն գրածները թէեւ տիխութեան քօղով պատած , կը նմանէին ան միրկալից երկնքին որ ամպերուն մէջէն արևել կը չողացընէ . արտասուր և ժպիտ խառնուած էին անոնց մէջ , և ցաւադին հառաջանաց հետ ցնծութեան անմեղ աղաղակներ կը բարձրանային : իրեք տարի եղեր էր հեռաւորութիւննիս . կը մնար տարի մըն ալ , անկէ ետքը վերջին մեծ փորձը . մէկ տարի միայն , և թերեւս անկէ ետքը բժշկուած էր կասդոն :

Այս վերջին տարին առջիններուն չափ ալէկոծեալ չանցաւ , սակայն ոչ ինչ պակաս վշտալի : Ճամբորդութիւննիս դադրեցուցինք գերմանիոյ պզտիկ գեղի մը մէջ : Ատենէ մը ՚ի վեր կասդոնն անզգայ վիճակի մէջ կը տեսնէի , որ նեղացուցիչ չէր , բայց մոլեգնութեան կատաղութիւններէն աւելի կը վհատեցընէր զիս : Օրերով շարաթներով բերանը բնաւ չէր բանար . երբ կը ջանայի թմրութիւնն անցընել՝ մարած աշբով երեսս կը նայէր ու ապուշ գէմքով կը ժպտէր : Ինչ որ ըսէի՝ պատասխանն ասիկայ էր անխտրաբար . Օլիվիէ մեռաւ , ես եմ զինքն սպաննողը : Կնոջ անունը լած միջոցը՝ գեռվրան դող կու գար . բայց որովհետեւ խենթութիւնը չէր կրնար ազդել իր թուզած մոքին վրայ , մէկէն կը դառնար կ'իյնար կասդոն իր լոիկ անշարժութեան մէջ : Անտարբեր էր ամենայնի , չէր գիտէր և հոգը չէր գիտնալ ուր տարած ըլլաս զինքը . ամէն տեղ իրեն համար աղէկ էր Գաղղիայէն հեռու : Վախը զիս առաւ ու գրեթէ աղաջանօք որ վերջ տայ ասանկ երկար տանջանքի մը՝ բայց անզութը պատասխանեց . Գեռ սպասէ :

8. ՍԱՆՏՈՑ
Հեռեկայն ուրիշ բերրով :